

ք. Երևան

«Հայաէրոնավիգացիս» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Դաստ Պրինտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դավիթ Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Տպագրական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1, N 1.1, N 1.2, N 1.3, N 1.3.1, N 1.4, N 1.4.1, N 1.4.2, N 1.5, N 1.5.1 և N 1.5.2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 1.3, N 1.3.1, N 1.4, N 1.4.1, N 1.4.2, N 1.5, N 1.5.1 և N 1.5.2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 1.3, N 1.3.1, N 1.4, N 1.4.1, N 1.4.2, N 1.5, N 1.5.1 և N 1.5.2 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 1.3, N 1.3.1, N 1.4, N 1.4.1, N 1.4.2, N 1.5, N 1.5.1 և N 1.5.2 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 1.3, N 1.3.1, N 1.4, N 1.4.1, N 1.4.2, N 1.5, N 1.5.1 և N 1.5.2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1460100 (մեկ միլիոն չորս հարյուր վաթսուց հազար հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 1.3, N 1.3.1, N 1.4, N 1.4.1, N 1.4.2, N 1.5, N 1.5.1 և N 1.5.2 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²² Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի

²² Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով. բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝

բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 1.3, N 1.3.1, N 1.4, N 1.4.1, N 1.4.2, N 1.5, N 1.5.1, N 1.5.2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:


7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

« Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ »

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Հվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Հվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144

Գլխավոր
տնօրեն



Ա.Գասպարյան

« Կ Ա Տ Ա Ր Ո Ղ »

«Դասո Պրինտ» ՍՊԸ
Ք. Երևան, Աջափնյակ շրջ. Նորաշեն թ. 292., 122
տարածք
«Հենեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022395441001
ՀՎՀՀ 00022766

Տնօրեն



Պետրոսյան

Հավելված N 1
 «26» 06. 2020 թ. կնքված
 ՀԱՆ-ԳԱ-ՊՁԲ-11/20 ծածկագրով պայմանագրի

№ 2. 50/

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Ծածկագիրը՝ ըստ ԳՍԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	վերջնաժամկետը
1.	79811100/7	տե'ս հավելված 1.1	դրամ	219900	1	ք. Երևան-0042, Ի. Գասպարյան-33, «Հայտերնոնավիզացիա» ՓԲԸ	30.09.2020թ.
2.	79811100/8	տե'ս հավելված 1.1	դրամ	97800	1	ք. Երևան-0042, Ի. Գասպարյան-33, «Հայտերնոնավիզացիա» ՓԲԸ	30.09.2020թ.
3.	79811100/9	տե'ս հավելված 1.1	դրամ	446400	1	ք. Երևան-0042, Ի. Գասպարյան-33, «Հայտերնոնավիզացիա» ՓԲԸ	30.09.2020թ.
5.	79811100/11	տե'ս հավելված 1.1	դրամ	69600	1	ք. Երևան-0042, Ի. Գասպարյան-33, «Հայտերնոնավիզացիա» ՓԲԸ	30.09.2020թ.
6.	79811100/12	տե'ս հավելված 1.1	դրամ	269400	1	ք. Երևան-0042, Ի. Գասպարյան-33, «Հայտերնոնավիզացիա» ՓԲԸ	30.09.2020թ.
7.	79811100/13	տե'ս հավելված 1.1	դրամ	319500	1	ք. Երևան-0042, Ի. Գասպարյան-33, «Հայտերնոնավիզացիա» ՓԲԸ	30.09.2020թ.
8.	79811100/14	տե'ս հավելված 1.1	դրամ	37500	1	ք. Երևան-0042, Ի. Գասպարյան-33, «Հայտերնոնավիզացիա» ՓԲԸ	30.09.2020թ.

« Դ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ »

«Հայտերնոնավիզացիա» ՓԲԸ
 ք. Երևան-0042, «Հավաքող» ՕԿ

Հ/Հ 2470642000089 ՀՀ դրամ

ՆՇԻՐ «Հավաքող» մ/ճ

ՀՎՀՀ 01216144

Գլխավոր տնօրեն

Ա. Գասպարյան

ստորագրություն

« Կ Ա Տ Ա Ր Ո Ղ »

«Դաս Պրինտ» ՍՊԸ

Ք. Երևան, Աջափնյակ շրջ. Նորաշեն թ. 292., 122

տարածք

«Հինեկորանկ» ՓԲԸ

Հ/Հ 2050022395441001

ՀՎՀՀ 00022766

Տնօրեն

Ղ. Պետրոսյան

ստորագրություն



Չափ աբա ժին	Անվանումը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Բնութագիրը
1.	Թվային տպագրության ծառայություններ՝ օրացույց-օրագիր	79811100/7	2021թ-ի համար հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով, A5 ֆորմատի, թղթի խտությունը 80մ/գ, Կոշտ կազմով դերմանտին փափուկ մակերեսով, սև կամ մուգ կարմիր, կազմի վրա Ընկերության լոգոտիպի տպագրությամբ: Էջերի քանակը 250, պետք է գետեղված լինի 2020-2021 օրացույցների, աշխարհի ժամային գոտիների, չափման համակարգի, քաղաքների հեռախոսային կոդերի մասին տեղեկատվությունները և յուրաքանչյուր էջի վրա լինի ընկերության լոգոտիպը, ամիս անսաթվի գրելու տող, բաշխվածություն ըստ ժամերի, նշումների տեղ: Տպաքանակը՝ 120 հապ
2.	Թվային տպագրության ծառայություններ՝ օրացույց սերանի	79811100/8	2021թ-ի համար հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով, 2աբաթական օրացույց /օրգանայգեր, ամուր կազմով, կազմի վրա Ընկերության լոգոտիպի, իսկ տակդիրի վրա հասցեի տպագրությամբ: Էջերի քանակը առնվազն 120, յուրաքանչյուր էջի վրա լինի բաշխվածություն ըստ ժամերի նշումների տեղ և եռամսյակային օրացույց: 2ափսերը՝ փակ վիճակում 180x320մմ, էջերը և կազմերը 4+4 տպագրությամբ: Տպաքանակը՝ 120 հապ
3.	Թվային տպագրության ծառայություններ՝ օրացույց պատի	79811100/9	2021թ.-ի համար օրացույց պատի եռամսյակային շարժական օրանիշով, հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով, բաղկացած 4 մասից, փաթեթավորված թափանցիկ պոլիէթիլենի ծրարում: Յուրաքանչյուր մասի լայնությունը 35սմ, երկարությունը 22սմ չափի: 1-ին մասի թղթի հաստությունը 500գ/մ գունավոր ֆոտոտպագրությամբ, Ընկերության լոգոտիպի և հասցեի տպագրությամբ: 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի վրա գունավոր տպագրությամբ անսաթվան օրացույց, յուրաքանչյուր մաս բաղկացած է 12 թերթից: Օրացույցը փաթեթավորված է պոլիէթիլենային տոպրակում: Տպաքանակը՝ 180 հապ
5.	Թվային տպագրության ծառայություններ՝ մայրուղային չվերթերի հաշվառման մատյանների	79811100/11	Մատյանի թերթերի քանակը՝ 100 թերթ, էջերի չափը՝ A4 ֆորմատի (ultra white office paper որակի), մատյանի էջերը թելով կար-ված, թելի ծայրերը կնիքի համար նախատեսված թղթով տուն-ծել կազմի ներսին: Մատյանի կազմը սովորաբար թե՛ պատված գունավոր բարակ դերմանտինով, կազմի վրա տեքստի տպագրությամբ:

			<p>Մայրուղային չվերթերի հաշվառման մատյանի տիտղոսաթերթի ձևավորումը և ներքին ձևավորումը տե՛ս՝ հավելված 1.2-ում: Տպաքանակը 25 հարյ</p> <p>Մատյանի թերթերի քանակը՝ 100 թերթ, էջերի չափը՝ A4 ֆորմատի (ultra white off ce paper որակի), մատյանի էջերը թելով կարված, թելի ծայրերը կնիքի համար նախատեսված թղթով տունձել կազմի ներսին: Մատյանի կազմը ստվարաթղթե՛ պատված գունավոր բարակ դերմանտինով, կազմի վրա տեքստի տպագրությամբ:</p> <p>Չափաբաժինն իր մեջ ներառում է.</p> <ul style="list-style-type: none"> • <<Աշտարակ>> կարգավարական կետի մատյանի տիտղոսա-թերթի և ներքին ձևավորումը տե՛ս՝ հավելված 1.3.: Տպաքանակը՝ 50 հարյ; • <<Գեղնավարում>> կարգավարական կետի մատյանի տիտղոս-աթերթի և ներքին ձևավորումը տե՛ս՝ հավելված 1.3.1: Տպաքանակը՝ 50 հարյ;
6.	Թվային տպագրության ծառայություններ՝ Աերողումային կարգավարական կետի կարգավարների գրանցամատյաններ	79811100/12	<p>Մատյանի թերթերի քանակը՝ 100 թերթ, էջերի չափը՝ A4 ֆորմատի (ultra white off ce paper որակի), մատյանի էջերը թելով կարված, թելի ծայրերը կնիքի համար նախատեսված թղթով տունձել կազմի ներսին: Մատյանի կազմը ստվարա-թղթե՛ պատված գունավոր բարակ դերմանտինով, կազմի վրա տեքստի տպագրությամբ:</p> <p>Չափաբաժինն իր մեջ ներառում է.</p> <ul style="list-style-type: none"> • Մատյան ՕԿԲ հերթափոխի ինժեների և օբյեկտի հերթափոխի ինժեների <p>Մատյանի տիտղոսաթերթը և ներքին ձևավորումը տե՛ս՝ հավելված 1.4: Տպաքանակը՝ 50 հարյ;</p> <ul style="list-style-type: none"> • Մատյան տեխնիկական սպասարկման և վերանորոգման Մատյանի տիտղոսաթերթը և ներքին ձևավորումը տե՛ս՝ հավելված 1.4.1: Մատյանի տեխնիկական ուսուցման • Մատյան տեխնիկական ուսուցման Մատյանի տիտղոսաթերթը և ներքին ձևավորումը տե՛ս՝ հավելված 1.4.2: Տպաքանակը՝ 5 հարյ:
7.	Թվային տպագրության ծառայություններ՝ տեխնիկական սպասարկման և վերանորոգման, հերթափոխի ինժեների գրանցամատյաններ	79811100/13	

8.	Թվային տպագրության ծառայությունների մատչաններ	79811100/14	<p>Մատչանի թերթերի քանակը՝ 100 թերթ, էջերի չափը՝ A4 ֆորմատի (ultra white office paper որակի), մատչանի էջերը թելով կար-ված, թելի ծայրերը կնիքի համար նախատեսված թղթով սուն-ձել կազմի ներսին: Մատչանի կազմը սովորաբար լինում է՝</p> <p>Չափաբաժինն իր մեջ ներառում է.</p> <p>Մատչան մտից փաստաթղթերի գրանցման</p> <p>Մատչանի ներքին ձևավորումը տե՛ս հավելված 1.5:</p> <p>Տպաքանակը՝ 6 հազ:</p> <p>Մատչան գործուղման վկայականների գրանցման՝</p> <p>Մատչանի ներքին ձևավորումը տե՛ս հավելված 1.5.1: Տպաքանակը՝ 2 հազ:</p> <p>Մատչան սոցիալական փաթեթների գրանցման՝</p> <p>Մատչանի ներքին ձևավորումը տե՛ս հավելված 1.5.2:</p> <p>Տպաքանակը՝ 2 հազ:</p>
----	---	-------------	---

« Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ »


«Հայկերոնամիզացիա» ՓԲԸ
 Բ. Երևան-0042, <<Հվարթոնգ>> ՕԿ
 Ի. Գասպարյան 33
 Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
 ԱՇԻԲ <<Հվարթոնգ>> մ/ճ
 ՀՎՀՀ 01216144


 Ա. Գասպարյան
 ստորագրություն


 Գլխավոր
 տնօրեն

« Կ Ա Տ Ա Ր Ո Ղ »

«Դատ Պրինտ» ՍՊԸ
 Բ. Երևան, Աջաիկյակ շրջ. Նորաշեն թ. 292.,
 122 տարածք
 <<Ինտելրբանկ>> ՓԲԸ
 Հ/Հ 2050022395441001
 ՀՎՀՀ 00022766


 Ա. Գեղոցյան
 Տնօրեն



26								
27								
28								
29								
30								
31								
32								
33								

Յուրաքանչյուր էջի վրա պետք է լինի դաշտերի անվանումների տող՝ 1.3 սմ բարձրությամբ, և 33 համարակալված տող 0.6սմ բարձրությամբ:

Յուրաքանչյուր տող պետք է կազմված լինի 10 սյունից (տես կից նկարը), հետևյալ լայնության չափերով.

1. հ/հ՝ լայնությունը 1 սմ (բոլոր տողերը համարակալված)
2. Մուտքի կետ՝ լայնությունը 1.8 սմ
3. Մուտքի ժամանակ՝ լայնությունը 1սմ
4. Օդանավի տեսակ՝ լայնությունը 1.5 սմ
5. Եռանիշ կոդ և չվերթի համար՝ լայնությունը 3 սմ
6. Օդանավի ազդակոչ՝ լայնությունը 1.5 սմ
7. Մեկնման և ժամանման օդանավակայան՝ լայնությունը 4 սմ
8. Թռիչքային մակարդակ՝ լայնությունը 1.5 սմ
9. Ելքի կետ՝ լայնությունը 1.8 սմ
10. Նշումներ՝ լայնությունը 1 սմ

« Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ »

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
 ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ
 Ի.Գասպարյան 33
 Հ/Կ 247064200089 ՀՀ դրամ
 ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/ճ
 ՀՎՀՀ 01216144

Գլխավոր
 տնօրեն



Ի.Գասպարյան



« Կ Ա Տ Ա Ր Ո Ղ »

«Դաստ Պրինտ» ՍՊԸ
 ք. Երևան, Աջափնյակ շրջ. Նորաշեն թ. 292., 122
 տարածք
 <<Ինտերբանկ>> ՓԲԸ
 Հ/Կ 2050022395441001
 ՀՎՀՀ 00022766

Տնօրեն



Դ. Պետրոսյան



Հավելված 3

50 էադր

Տիրույթային.

Журнал

Приема-сдачи дежурства, учета взлетов
посадок и полетов ВС на диспетчерском пункте <<Вышка>>

(Аэропорт, Комитет ГА РА)

Начат: << >> _____ 202 г.

Окончен: << >> _____ 202 г.

№ 2.50 / « 26 » 06. 2020 թ. կնքված Հավելված N 1.3.1
ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-11/20 ծածկագրով պայմանագրի

Հավելված 3.1

50 էջ

Տիպընթաց.

Журнал

Приема-сдачи дежурства, учета отправления
и прибытия ВС на диспетчерском пункте <<Руление>>

(Аэропорт, Комитет ГА РА)

Начат: << >> _____ 202 г.

Окончен: << >> _____ 202 г.

№ 250/ « 26 » 06 2020 թ. կնքված Հավելված N 1.4
ԱՆ-ԳԱՊՁԲ-11/20 ծածկագրով պայմանագրի

Տիտղոսաթերթ՝

ՄԱՏՅԱՆ

ՕԿ ԼԵՐԹԱՓՈՒՄԻ ԻՆՃԵՆԵՐԻ ԵՎ ՕԲՅԵԿՏԻ ԼԵՐԹԱՓՈՒՄԻ ԻՆՃԵՆԵՐԻ

Սկսված է՝ << ___ >> _____ 20 թ.

Ավարտված է՝ << ___ >> _____ 20 թ.

Մատյանի մյուս էջերը՝

Ամսաթիվ	Դիտողություններ օբյեկտի սարքավորումների, կապուղիների աշխատանքի վերաբերյալ, ոչ ստանդարտ իրավիճակներ	Ստորագրություն

Աղույակի տողերի քանակը՝ 33, առաջին տողի բարձրությունը 20մմ, մնացած տողերի միջև տարածությունը՝ 8մմ, առաջին սունյակի լայնությունը 20մմ, երկրորդինը՝ 140մմ, երրորդինը՝ 20մմ:

« Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ »

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Ը 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/ճ
ՀՎՀՀ 01216144

Գլխավոր
տնօրեն

Ա.Գասպարյան

« Կ Ա Տ Ա Ր Ո Ղ »

«Դաստ Պրինտ» ՍՊԸ
Ք. Երևան, Աջափնյակ շրջ. Նորաշեն թ. 292., 122
տարածք
<<Ինտեկոբանկ>> ՓԲԸ
Հ/Ը 2050022395441001
ՀՎՀՀ 00022766

Տնօրեն

Դ. Պետրոսյան



Տիտղոսաթերթ՝

ՄԱՏՅԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ և ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ

(օբյեկտի անվանումը)

(ծառայությունը)

Սկսված է՝ <<____>> _____ 20 թ.

Ավարտված է՝ <<____>> _____ 20 թ.

Մատյանի մյուս էջերը՝

Ամսաթիվ	Միջոցի անվանումը	SU կամ վերանորոգ. տեսակը	Իրականացված աշխատանքների և ծախսված նյութերի ցանկը. Եզրակացություն տեխնիկական վիճակի մասին. SU,վերանորոգում իրականացնող անձի ստորագրությունը	Դիտողությաններ

Աղույակի տողերի քանակը՝ 31, առաջին տողի բարձրությունը 30մմ, մնացած տողերի միջև եղած տարածությունը՝ 8մմ, առաջին սունյակի լայնությունը 20մմ, երկրորդինը՝ 30մմ, երրորդինը՝ 30մմ, չորրորդինը՝ 70մմ, հինգերորդինը՝ 30մմ:

« Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ »

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
 ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ
 Ի. Գասպարյան 33
 Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
 ԱՇԽՔ <<Զվարթնոց>> մ/6
 ՀՎՀՀ 01216144

Գլխավոր
տնօրեն

ստորագրություն

Ա. Գասպարյան

« Կ Ա Տ Ա Ր Ո Ղ »

«Դասո Պրինտ» ՍՊԸ
 ք.. Երևան, Աջափնյակ շրջ. Նորաշեն թ. 292., 122
 տարածք
 <<Ինտեկոբանկ>> ՓԲԸ
 Հ/Հ 2050022395441001
 ՀՎՀՀ 00022766

Տնօրեն

Գ. Պետրոսյան



Տիտղոսաթերթ՝

ՄԱՏՅԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ

Սկսված է՝ « ____ » _____ 20 թ.
 Ավարտված է՝ « ____ » _____ 20 թ.

Մատյանի մյուս էջերը՝

№	Պարամետր-ների անցկացման ամսաթիվը	Պարամետր-ների թեման	Պարամետր-ների բովանդակությունը	Պարամետր-ների վերնագրերը	Դասատման քանակը	Օբյեկտի անձնակազմի դասընթացներին	Դասավանդող	Օբյեկտի ղեկավար	Ստորագրություն
1	2	3	4	5	6	7	8	9	10

Աղույակի տողերի քանակը՝ 3, առաջին տողի բարձրությունը 40մմ, երկրորդ տողի՝ բարձրությունը 5մմ, երրորդինը՝ մինչև էջի վերջը, առաջին սունյակի լայնությունը 15մմ, երկրորդինը՝ 15մմ, երրորդինը՝ 40մմ, չորրորդինը՝ 45մմ, հինգերորդինը՝ 50մմ, վեցերորդը 15մմ, յոթերորդը 25մմ, ութերորդը 25մմ, իններորդը 25մմ, տասերորդը 20մմ:

« Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ Ո Ւ »

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
 ք.Երևան-0042, «Ձվարթնոց» ՕԿ
 Խ. Գասպարյան 33
 Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
 ԱՇԻԲ «Ձվարթնոց» մ/ճ
 ՀՎՀՀ 01216144



Գլխավոր
 սնօրեն

Ա. Գասպարյան

« Կ Ա Տ Ա Բ Ո Ղ »

«Դասո Պրինտ» ՍՊԸ
 ք. Երևան, Աջափնյակ շրջ. Նորաշեն թ. 292., 122
 տարածք
 «Ինտերբանկ» ՓԲԸ
 Հ/Հ 2050022395441001
 ՀՎՀՀ 00022766



Տնօրեն

Պետրոսյան

Հավելված N 2
 «26» 06
 2020 թ. կնքված
 ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-11/20 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

		Ծառայության									
իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	նվիրույ	նվազ	ուստոսո	սկզբնական	սկզբնական	սկզբնական	սկզբնական	սկզբնական	սկզբնական
		դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**	219900	219900	219900	219900	219900	219900	219900	219900	219900
1.	79811100/7	Թվային տպագրության ծառայություններ՝ օրացույց-օրագիր	97800	97800	97800	97800	97800	97800	97800	97800	97800
2.	79811100/8	Թվային տպագրության ծառայություններ՝ օրացույց սեղանի	446400	446400	446400	446400	446400	446400	446400	446400	446400
3.	79811100/9	Թվային տպագրության ծառայություններ՝ օրացույց պլատի	69600	69600	69600	69600	69600	69600	69600	69600	69600
5.	79811100/11	Թվային տպագրության ծառայություններ՝ մայրուղային չվերթերի հաշվառման մատյանների	269400	269400	269400	269400	269400	269400	269400	269400	269400
6.	79811100/12	Թվային տպագրության ծառայություններ՝ Աերոդրոմային կարգավարական կետի կարգավարների գրանցամատյաններ	269400	269400	269400	269400	269400	269400	269400	269400	269400

ՀՀ դրամ

7.	79811100/13	Թվային տպագրության ծառայություններ՝ տեխնիկական սպասարկման և վերանորոգման, հերթափոխի ինժեների գրասենյակայիններ	319500	319500	319500	319500	319500	319500	319500	319500	319500
8.	79811100/14	Թվային տպագրության ծառայություններ մատյաններ	37500	37500	37500	37500	37500	37500	37500	37500	37500

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով:

« Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ »

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
 ք. Երևան-0042, <<Հվարթոնց>> ՕԿ
 Ի. Գասպարյան 33
 Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
 ԱՆԻԲ <<Հվարթոնց>> մ/6
 ՀՎՀՀ 01216144



Փլխավոր
 տնօրեն Ա. Գասպարյան
ստորագրություն

« Կ Ա Տ Ա Ր Ո Ղ »

«Դաստ Պրինտ» ՍՊԸ
 ք.. Երևան, Աջափնյակ շրջ. Նորաշեն թ. 29շ., 122 տարածք
 <<Ինելկորանկ>> ՓԲԸ
 Հ/Հ 2050022395441001
 ՀՎՀՀ 00022766

Տնօրեն Դ. Պետրոսյան



Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների					Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը				
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« 26 » 06 . 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն